ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 288- Ա **06 ապրիլի 2016 թ.**

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 300000 /երեք հարյուր հազար/ դրամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված՝ պայմանագրային զինծառայողներ Վրեժ Վարդանի Սարգսյանի, Հարություն Հովհաննեսի Աբրահամյանի և Գարիկ Սուրիկի Մելքոնյանի ընտանիքներին՝ յուրաքանչյուրին 100000/մեկ հարյուր հազար/ դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ, գումարը վճարել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Իվան Ասատրյանի միջոցով :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016թ. ապրիլի 6-ի
N 288-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

ԴՐԱՄԱԿԱՁՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂՆԵՐԻ

հ/հ	ազգանուն, անուն	հասցե	հատկացված գումարի չափը դրամով	ծանոթություն
1.	Վրեժ Վարդանի Սարգսյանի ընտանիքին	Գեղարքունիքի մարզ, գ.Փոքր Մասրիկ	100000/մեկ հարյուր հազար/	զոհված պայմանագրային զինծառայողի ընտանիք
2.	Հարություն Հովհաննեսի Աբրահամյանի ընտանիքին	Գեղարքունիքի մարզ, գ.Արեգունի	100000/մեկ հարյուր հազար/	զոհված պայմանագրային զինծառայողի ընտանիք
3	Գարիկ Սուրիկի Մելքոնյանի ընտանիքին	Գեղարքունիքի մարզ, գ.Զոլաքար	100000/մեկ հարյուր հազար/	զոհված պայմանագրային զինծառայողի ընտանիք

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ